ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2024 թվականի հունիսի 24-ի՝ հարցման կարգով նիստի N 12 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- Լեզուների ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու **Աննա Ռուբենի Ղարսլյանի** և նույն ամբիոնի ավագ դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու **Աննա Երեմի Երկանյանի «Հայոց լեզվի գործնական աշխատանքների ձեռնարկ տնտեսագիտական ֆակուլտետների ուսանողների համար» ուսումնական ձեռնարկի հրատարակությունը երաշխավորելու** մասին հարցը:

Հրատարակության ներկայացված ուսումնական ձեռնարկը կազմված է ՀՊՏՀ-ում գործող «Հայոց լեզու և հայ գրականություն» դասընթացի ծրագրի թեմաներին համապատասխան: Ձեռնարկի նպատակն է տնտեսագիտական ֆակուլտետներում մայրենի լեզվի դասընթացը կազմակերպել մասնագիտական խոսքի ու բառապաշարի լեզվաբանական մեթոդաբանությամբ մշակված տեսականի և գործնականի ընդգրկմամբ, ինչը կնպաստի ուսանողների՝ մայրենի լեզվով բանավոր և գրավոր խոսքում մասնագիտական լեզվամտածողության զարգացմանը: Այն իր նպատակադրությամբ բուհական համակարգում առաջին փորձերից մեկն է: Ձեռնարկը տնտեսագիտական բառապաշարի, խոսքի, լեզվական կաղապարների ուսումնասիրություն է գործնական աշխատանքների խորացմամբ և ամրապնդմամբ: Ընդգրկում է արդիական և նորարարական առաջադրանքներ, որոնք բխում են ուսանողների հետաքրքրություններից, նրանց մղում մասնագիտական (և ոչ միայն) նորանոր որոնումների և բացահայտումների՝ ուսումնական գործընթացը դարձնելով ակտիվ և թիմային: Առաջադրանքները կառուցված են միջգիտակարգային փոխհարաբերության սկզբունքով՝ տնտեսագիտություն - լեզվաբանություն, տնտեսագիտություն - իրավագիտություն, տնտեսագիտություն - փիլիսոփայություն և այլն: Ձեռնարկը կզարգացնի ուսանողների բանավոր խոսքը և մասնագիտական բառապաշարը, լեզվական նորմերի իմացությամբ գրավոր խոսքը, ստեղծագործական և երևակայական, վերլուծական և դատողական միտքը, գիտական խոսք ձևավորող և գործառնական ոճերը տարբերակող հմտությունները, գործնական աշխարհում նպատակային հաղորդակցվելու և համագործակցելու հմտությունները, կխթանի մասնագիտական գրագետ խոսք կառուցելու կարողությունների զարգացումը:

Ուսումնական ձեռնարկն ուղարկվել է 2 արտաքին անանուն («կույր») գրախոսության և 2 գրախոս փորձագետների կողմից ստացվել են դրական եզրակացություններ:

Ուսումնական ձեռնարկի վերաբերյալ ստացվել են նաև մեկ արտաքին և մեկ ներքին գրախոսների դրական կարծիքներ.

1. Մանուկ Հարությունի Ֆելեքյան՝ Երևանի պետական համալսարանի հայոց լեզվի ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու:

2. Զուխրա Արմենակի Երվանդյան՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի լեզուների ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու:

Հրատարակության ներկայացված ուսումնական ձեռնարկը գրված է մասնագիտական բարձր պատրաստվածությամբ և ակադեմիական բարեխղճությամբ: Այն նախատեսված է տնտեսագիտական ֆակուլտետների և քոլեջների ուսանողության, նրանց՝ մայրենի լեզու դասավանդող մասնագետների համար:

Ուսումնական ձեռնարկը հրատարակության է երաշխավորվել լեզուների ամբիոնի 2024 թվականի մարտի 26-ի նիստում (արձանագրություն N 7) և գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողովի 2024 թվականի հունիսի 3-ի, ժամը 13:30-ի նիստում (արձանագրություն N 32):

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հիմք ընդունելով 2 արտաքին անանուն («կույր») գրախոս փորձագետների դրական եզրակացությունները, մեկ արտաքին և մեկ ներքին գրախոսների դրական կարծիքները, լեզուների ամբիոնի և գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողովի նիստերի որոշումները՝ լեզուների ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու **Աննա Ռուբենի Ղարսլյանի** և նույն ամբիոնի ավագ դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու **Աննա Երեմի Երկանյանի «Հայոց լեզվի գործնական աշխատանքների ձեռնարկ տնտեսագիտական ֆակուլտետների ուսանողների համար» ուսումնական ձեռնարկը երաշխավորել հրատարակության՝ 200 օրինակ տպաքանակով, «Տնտեսագետ» հրատարակչությունում** (նախատեսված է հրատարակչության տարեկան թեմատիկ պլանով):

Սահմանված ժամկետում (ժամը 9:00-ից մինչև 17:30-ն ընկած ժամանակահատվածում) հարցման կարգով նիստի օրակարգային հարցի քննարկմանն ու քվեարկությանը գիտական խորհրդի 60 անդամից մասնակցեցին 54-ը: Քվեարկության արդյունքներն են. կողմ՝ 54, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ա. Լ. Գրիգորյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ե. Հ. Պարոնյան**

2024 թ. հունիսի 24
Երևան